



St. Petersburg № 253.

St. Petersburg № 253.

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արտաքին փալկ և ներքին տաղնապ. Ֆրանսիական դատաբանի լիբրեր.—Նեթվիլեն Տեճութիթիւն. Մտտեճադրութիւն. Նամակ Կաղպապանից. Նամակ Սալաքալաքից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՍՏԱՒԻՆ Տեճութիւն. Կաճափա Գէլ-Կառտիլիո. Յունաց կառավարութեան յորդըք. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌԻՆ ԼՈՒՐԵՆ.—Հեռագրութիւն.—ԲՈՐՍՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍՈՒՄԱՆ. Նամակներ Մօսկուից.

ԱՐՏԱՌԻՆ ՓԱՅԼ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՏԱԳՆԱՊ

Եւրօպական վեց մեծ պետութիւններէն մէկը Աւստրիան, այժմ երեքվում է ներքին խռովութիւնների փութորկների մէջ: Չեխերի և գերմանացիների մէջ սպալմած ազգայնական կոխը օրէցօր կատարի և սպառնալից կերպարանք է ընդունում: Կոիւբ, ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, սկսվեց աւստրիական ըէյնարատում այն առիթով, որ չեխներ լեզուն ընդունելից պետական հիմնարկութիւններ և դպրոցների մէջ: Աւստրիական կառավարութիւնը ուրիշ ճար չը գտաւ այդ փութորկը հանդարտեցնելու համար, բայց միայն ժամանակից առաջ փակելով ըէյնարատի նիստերը: Սակայն այդ միջոցը միայն կրակի վրա իւր ամէն էր նշանակում: Կոիւբ պարլամենտի շինութիւնից դուրս եկաւ, անցաւ հասարակութեան մէջ: Փողոցը շարունակեց պարլամենտական հետօրների սկսածը իրան յառուկ միջոցներով: Կըքերը հըրկեհվեցին, երկու աղբութիւնները, մուսակալով զափ ու սահման, սկսեցին կըծել միմեանց: Լրագիրները հաղորդում են, որ մի քանի անգըրում կոիւ անգըլ ունեցաւ չեխեր և գերմանացիների մէջ և արկնապահելութիւնների կարելի եղաւ մի կըրպը կըրչ գնիլ ոստիկանական խիտ միջոցներով: Կան ապսպածներ և փրաւորպածներ:

Ազդայնական ահաւոր փոթորիկները դիմաց առ. այժմ անկօր է Հաբարուրդեան տան կառավարութիւնը: Եւ ի՞նչ պիտի լինէ նա: Երևան է եկել մէկ այն ներքին խոցերէն, որոնք վաղուց բացվել են այդ պետութեան մարմին վրա ե արդունում են վերջ ի վերջը լափել, ոչնչացնել նրան: Աւատ-րկայում՝ ապօրոյ բազմաթեւ ե բազմացել ազգերը, շունենալով ներքին համբաշխու-թեան կապը, չը գտնելով մի արդար ե օրինական դրութիւն, օրի մէջ իւրաքան-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Մ Օ Ս Կ Վ Ա Յ Ի Յ

III

3m 28-15

XII Մի քանի տարի քաղաքացիական պատերազմից անցած և քաղաքացիական պատերազմի

Չանազան կոնգրեսներ, ցուցահանդիսներ ու համաժողովներ՝ լինեն զրանք գիտական, գեղարուեստական թէ արդիւնաբերական, լինեն զրանք սոսկ ազգային թէ միջազգային՝ տարա-կոյս չը կայ, որ մեծ զարկ են տալիս մարդկա-կին առաջադիմութեան գործին և անշուշտն կարեւոր են հանդիսանում ազգերի կենսաբու-մարդ թաղաքակիրթ աշխարհը վաղուց արդէն ըմբռնել ու խոստովանել է այդ կարեւորութիւ-նը— և այդ է պատճառը, որ թէ լուսաւորեալ բարօգոյնն է թէ Ամերիկայում համարեն իւ-րաքանչիւր տարի տեղի են ունենում ոչ թէ մէկ, այլ երեքնմ մի քանի ժողովներ, համաժո-ղովներ ու ցուցահանդիսներ՝ վերաբերեալ գիտու-թեան, գեղարուեստին, զգականութեան, մա-մուլին, արդիւնաբերութեան և այլն։ Եւ որքան մեծ ու լայնածաւալ են լինում այդպիսի ձեռ-

Հիւր ազգ կարողանաւ ապրել առանց դժ-
գոհութեան և իր հարեաւաններէ հեռ ձեռք
ձեռքի տուած առջ գնար, իրարում են
փոխադարձ կատարել կախներէ մէջ և, ըստ
երեւոյթին, ուխտել են այդ դործի մէջ ո-
չինչ զիջում չանել միմեանց, մոռանալով
նոյն իսկ երկրի ընդհանուր բարօրութիւնը:
Այս տարի հեղեղները Աւտարկայում ահա-
զին փնտսանք են հասցրել, բայց նոյն իսկ
այս ընդհանուր թշուառութեան ժամա-
նակ հայաւան ազգութիւնները չը դա-
րարեցանք իրանց թշնամութիւնը: Ահա
թէ ինչպէս է ծրարում մի երկիր:

Միջնդեռն ներքուստ պետական հաստատություններ մասնավորապես և այսպիսի միմեանց հակառակ հոսանքներին, դրանց Աւստրիան պահպանում է իր փայլը իբրև մեծ պետություն, որ աղբյուրի դեր կատարում է մանաւանդ արեւելեան հարցի մէջ: Աւստրիական արտաքին քաղաքականութիւնը ներկայ դարի սկզբից մինչև այսօր եղել է վերին աստիճանի պահպանողականություն արդիւնական, տարադիր և անարդար: Նա հակառակ է եղել աղբյուրի ապատուութեան, մտցրել է միջազգային յարաբերութիւններ ի մէջ մութ մեքենայութիւններ, որոնց հեղինակն էր աւստրիական պետական գործիչ յաւարհուհակ Մետերնիխ: Այս մարդու ստեղծած նենդ ու խարդախ սխառմը, որ այնքան չարիքներ պատճառեց միջին և հարաւային եւրոպային, այժմ էլ Աւստրիայի համար մի սուրբ կտակ է: Հայոց, կրեւէի և ցեղասպանի հարցերում փայլէր այդ կտակի ամբողջ այլանդակութիւնը, ամեն տեղ զայրոյթ է և ատելութիւն տարածելով:

Դրանց այս տեսակ կեղև ունեցող և ներքին փոթորիկների մատուցած մի երկիր ի՞նչ հետք պիտի թողնէ, եթէ օրհասը բոլորովին մոռենալ և առաջ բերէ ճակատադրական վերջը։— Ի հարկէ, արտուր և մօսալ հետք։ Պէգերի ճգար և կանոնաւոր զարգացման թշնամին նախ և առաջ իր սեփական թշնամին է։ Եսամուղւթիւնը, որ փորում, ոչնչացնում է բարոյական բոլոր հիմքերը, մի պատիժ է, որից չեն կարող կուտարեթել նոյն իսկ ուժեղ մարմինները։— Կրա ապացոյցն է այժմեան Ալատիան։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

Վերջին պատուով ստացված հարստական լրա-

ներկութիւնները, նոյնքան մեծ ու բազմաթիւ-
մանի են նրանց արդիւնքները և օգուտները, իսկ նրանց միջազգային բնաւորութիւն տալն
ուղղակի մի աշխարհայաճ և երևելի գործ է
համամարդկային զարգացման և բարեկեցի-
կեան տեսակէտից: Եւ արդարեւ, առնենք հէյն
առաջիկայ «համազգային բժշկական համաժո-
ղովք», որ օգոստոսի սկզբներին տեղի է ունե-
նալու Մոսկվայում: Աշխարհի տանն ծայրերից
սկսած է հասաքվին մարդիկ՝ բաղմացել, բաղ-
մարժօն, բաղմարելու՝ սակայն ամենքն էլ ծա-
ռայող մի զործին, մի արուեստին: Նորան կաղ-
մած մի ընդհանուր բաղմանդամ ընտանիք, մո-
ղովված մէկ տեղ, օր ու զիշեր ամբողջ ժամեր
սկսած է անցկացնեն մի յարկի տակ. սկսած է
առնել, խօսնել, յայտնեն թեր ու դէմ կարծիք-
ներ, տեղի սկսած է ունենան մաքերի փոխանա-
կութիւն, հայկացքների չիտում, սկսած է յա-
րուցանվեն հաղարատոր կենսական հարցեր, հրա-
պարակ դան, բաղմաթիւ. ծանրակշիւ խնդիրներ,
որոնք բոլորն էլ լուծումն են պահանջում, բա-
ղմին էլ կարծու են ուսումնասիրութեան ու
կենսարարութեան: Եւ ահա մայր բաղմանդամ
այդ համաժողով ընտանիքը՝ ներհնչված քաղա-
կրթութեան ծառայելու գաղափարով, ողորդ-
ված իր հանրայաճ գործին, նրա զարգացման

գերմերը լինին են աեղեկություններով «Մեշկե-
րէթի» երկրասարդ-թիւրք խմբադրնները գէմ-
Պարիզի թիւրքաց դեսպանութեան յարուցած
դատի մասին: Զրանսիական լրագրներն այդ
առիթով ընդարձակ յօդուածներ են նուիրում
Հայաստանի կոտորածներն և նրանց վերին
հեղինակներ: Գառի մանրամասնութիւններն
արդէն հաղորդելնրը «Մշակի» նախանցեալ համա-
րում, այժմ առաջ ենք բերում զատարանի վրճ-
ուի բնագիրը՝ կիսապաշտօնական «Tems» լրագ-
րից քաղելով:

«Դատարանը՝
«Կիտառեակի» որ Հուլիան իբրև տնօրէն «Մէշ-
վէրէթ» լրագրի՝ Պարիզում, այս վերջին կերպ
ամփայ ընթացքում հրատարակել է հարցաքննիչ
դատաւորի ընտրութեան առարկայ դարձած յո-
ւանաճնկերը:

[illegible]

«Նվառեալ, որ յիշալ յօղածնեիք զորոշները եւ հրատարակելու համար Հուլիոսին զըրդօնեիք եղել են Հալիլ-Պանեմ Ահմէդ-Ռիզա».

«Բայց»

[illegible]

«Այդ նիման վրա
«Գատապարտում է մեղադրվածներից իւրա-
քանչիւրին 16 ֆրանկ (6 ռուբլի) տուգանքի».

«Հրամայում է, որ այս պատիժը առկախ
մնայ և այլն (Բէրանժէի օրէնքը):»

նպաստակուս զգացումներով՝ սկսած է լոյս սփռել բնփակյալ գիտութեան այս ու այն մասի, ասարակութեան կողմերի վրաս և՛ այնուհետև զարկելու տարանջատման երկ, վարատոված կարծիքներով մին ընդհանուր համեմատութեան, յանդերձում ընդհանուր եղբայրացութիւններին, ընդհանուր մեկնաբանոված կէտերին, այդ մարդիկ, գիտութեան այդ հաղորացումները, նոր հայացումները սկսած է ցրվան աշխարհիս զանազան ծայրերը, ամեն մէկը սկսած է գնաց իր հայրենիքը, իր երկիրը և այնտեղ իր ազգի, իր ժողովրդի մէջ դնել ու դարձան անող հանդիսանայ, ծառայէ հասարակաց բարիքին այն նորանոր զենքերով ու նորանոր միջոցներով, այն աստապաշարով ու տեսնելութիւններով, որ նա ձեռք է բերել բնփակյալ գիտութեան ներկայացուցիչներին «Միջազգային համաժողովում»։ Միկնայց բոլորը մի աշխարհաշահ, մի անաղին նշանաշարով իւրն ունեցող գործ է՝ մարդկային տառաջակցութեան և կենսի բարօրութեան համար։

Մարդկային մարմին, քաղաքակրթության ար-
գասիքներից ոչ մէկը այնպէս տեր կապրած չէ
մեր բարոյական և մասնաւոր ֆիզիքական
կեանքի հետ, որպէս բնական զիտքիւնը:
Այդ զիտքիւնն ձեռնարմն է մեր կեանքի թե-
ւը, մեր գոյութեան ամրոյդ իմաստը: Եւ այդ բա-

Երբ դատարանի նախագահը կարդաց այդ վեր-
ճիւղը, դատարանում խմբված ժողովուրդը—հայ
և թուրք միացած, ինչպէս հաղորդում են անգ-
լիական թղթակիցները, ծափահարեցին դռնէլով՝
vive la France, à bas le sultan (Կէցցէ Ֆրան-
սիան, կորցի սուլթանը)։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ሆ ሁ ሰ ፔ ን ሁ ዋ ሶ በ ኮ ቅ ኮ ኮ ን

„Султанъ и державы“—препод. Малькольма Мак-Колля,
каноника въ Рипонѣ. U. *Quarterly*, 1897.

(Շարունակութիւն)

1895 թվի մայիսին, ինչպես յայտնի է, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ղեկավարները ներկայացրին Բ. Դրան բեֆորմների մի ծրագիր, որ մշակված էր յառկապես հապաքնակ վեց նահանգների համար: Նկատի առնելով, որ ստվծանը յօթար կամբով չը պիտի ընդունէր այդ բեֆորմները, լորդ Ռօզբէրլի մինիստրութիւնը ուղեց առեկեղանակ թէ ինչ տարկադրանք միջնորդեն կարող են առաջարկել միւս երկու պետութիւնները—Ռուսաստանը և Ֆրանսիան, որոնք մասնակցել էին բեֆորմների խաղաղութեան: 1895 թվի յունիսի 14-ին Պետերբուրգի անգլիական ղեկավար հեռագրում էր լորդ կիմբըրէին. «Եւ այսպէս, իշխան Լօբանով մանրաժան կրկնող ինձ ան, ինչ ասել էր այս ամսի 4-ին և ես հեռագրել էի ձեզ նոյն օրը: Նա ասաց որ Ռուսաստանը վերին աստիճանի ուրակ կը լինի թիէ թիւրքաց ղեմիմի մէջ ըարեւաւուրթիւն մացնալի և ստվծանի հպատակ քրիստոնեաների կեանքն ու ստացուածքը շատ ապաստված լինեն: Դեկտանները ծրագրով այդ երկիրը պիտի ունենայ չախաղանց մեծ տարածութիւն և պիտի գրաւէ համարեա ամբողջ Փոքր-Ասիան... Խլխանը հասկանում է, որ թագուհու կառավարութիւնը նայում է այս գործին մի յայտնի անտարբերութեամբ, որովհետեւ Անգլիայի կամ նրա մի այլ կալուածքի ու յիշած երկրի մէջ հեռու տարածութիւն կայ:»

Այս հեռագրի իմաստը անդիլակա՛ն դեպքա՛նը
բացատրել է լորթ կիմբէլէթին գրած մի նամա-
կի մէջ։ Ահա ինչ է ասում նա, շիշխան Լօթա-
նով ասաց որ անկեղծաբար կը խօսէ ինձ հետ-
այս հարցի մասին։ Նա ասաց, որ թէ՛ կը, Պօլ-
սի երեքը դեպքա՛նները մշակել են ու՛րէ՛քֆօրմիսի
ծրագրը՝ Հայաստանի նամակը, քաղցր ըզ՛ն ու՛ մի

նրին պէտք է վերադարձնել այն երևույթը, որ բժշկականական գիտությունն ամենից առելի և անընդհատ ուսումնասիրությունն են նրվի և հանդիսանում կենսաբի մէջ, անվերջ զբաղեցնում ու նորոգում լարում է մարդկանց մտքերը: Բժշկական կոնգրեսները համեմատաբար տեղի են ունենում համ առելի յաճախ, համ էլ առելի բազմամարդ են լինում, Առաջիկայ Վիճազագային բժշկական համաժողովը, ինչպէս զրեւ էինք մեր անցեալ նամակում, թւում տաւ ներկու երդում է նրան և նրան մասնակցում են մօտ եօթ հազար հոգի: մի թիւ, որով հաղւ թէ կարողանալ պարենալ մի որ և է ուրի համաժողով: Իսկ բովանդակութեան կողմից հօ ներկայ բըժշկական համաժողովն այնքան հարուստ ու բազմակողմանի է, որ այդ համաժողովում քնննվելի նիւթերի և կարգացելիք զեկուցումների լոկ ցուցակը միայն մի մեծահատոր զիրը կազմում: Ընդհանուր ժողովներում, որ տեղի կունենան կայսերական մեծ թաաթոնում ընդամենը միայն երեք անգամ, րեֆերատներ են կարգաւ հռչակադրող զիտական ւլիբսով, Հանաւար և իւրկացնողութիւն: նշանակող զբքի և հոլինակ Ցուրինի պրօֆէսօր լամբրօզօն, յայտնի պրօֆէսօրներ կրաֆտ-էքինզ, լադէն և ուրիշները: Համաժողովում քննվելիք բազմազան

առում, տեղի ունեցաւ երեք գիւղում. յոլիսի 29-ին վաղեան պիւղում, օգոստոսի 1-ին Սալ-խիում և օգոստոսի 3-ին Բարալեթում: Փորձի ենթարկվեցին Լեւոնի, Գեորգի, Շէլլի, Սակի և ուրիշ գումաները: Գիւղացիները հաւանեցին մի քանի գումաններ և գնեցին: Շատերը դեռ կտակածով են վերաբերվում և սպասում են թէ ինչ հետեանքներ կը ստացվեն այն գումաննե-րից, որ արդէն գնված են:

Հազարգելով թիֆլիսի դումայի նոր ձայնաու-րների հաստատութեան ուղբը, «Черноморский Вестник» լրագիրն աւելացնում է. «Թիֆլիսի նոր դումայի 79 ձայնաւորներից՝ 16 ուսանե-ր են, 55—հայեր, 8—վրացի, լեհ և գերմանացի: Փոթիի դումայում կան 4 ուսու, Բաթումի դու-մայում՝ 7 ուսու, Քութայիսի դումայում՝ և ոչ մի ուսու:

Քութայիսումն է՞ ձայներն և մեղաւոր...

Թիֆլիսում եղանակի մէջ անսպասելի փոփո-խութիւն է նկատուի. օգոստոսի 5-ին երեկո-յեան շատերն արդէն վերադառնալով էին դրոս-նում: Զերմալար չուքում ցոյց է տալիս 20⁰ R.

Կառավարութիւնը մտադիր է բանալ կրեդիտ աշն կարունածաւերի և գիւղական համայնքնե-րի համար, որոնք մտադրութիւն ունեն լիւրա-ուութիւն և անը գինեգործութեան վրա ծախ-սեր անելու, օրինակ, չինի՝ յարմար և ընդար-ձակ նկուղներ, բերել տալ գինեգործական դանաղան մեքենաներ և այլն:

Լսում ենք, որ Բագուի խոտիկեցիայի չըր-ջանում միտք է ծագել մի նոր լրագիր հրատա-րակելու թոյլտւութիւն խնդրել: Դա, տարաբաղ-դաբար, ինչ կը գէշ գեղեցիկ միտքը շատ անգամ է ծագել Բագուի խոտիկեցիայի մէջ, և միայն էլ մեռել չիբազորված, ինչպէս ուրիշ շատ գեղեցիկ ծրագիրներ... Յանկանում ենք, որ գոնէ այս անգամ այդ մտադրութիւնը իրա-կանանար, քանի որ նախաձեռնողի միակ թիւթին էլ ընկել է կապիտալիստի ձեռքը, և ուրեմն դժուար կարող է հասարակութեան ծառայել:

Կովկասում գոյութիւն ունեցող դանաղան բա-րեգործական հիմնարկութիւններ և ընկերու-թիւններ իրանց եկամտի աղբիւրները շատացնե-լու համար մինչև այժմ յաճախ դիմում էին լո-ստրէա-ալլէգրիի կազմութեան: Մի քանի ըն-կերութիւնների համար ալլէգրիին նոյն իսկ ե-կամտի միակ աղբիւրն էր: Այժմ Կովկասի կառավարչապետը, ի նկատի ունենալով, որ վի-ճակաւորները և ալլէգրիները առաջանում են ուրիշ վիճանքի, ինչպէս յայտարարված է պաշ-տանապէս, անհրաժեշտ է համարել կարգադրել, որ այսուհետեւ բարեգործական նպատակով այլ ևս չը թոյլատրվեն վիճակաւորներ և ալլէգրիներ, և առաջարկվի բարեգործական ընկերութիւն-ներին ու հիմնարկութիւններին աշխատել որո-նել եկամտի ուրիշ աղբիւրներ:

Հողագործներին օգնելու նպատակով երկրա-գործութեան միջնորդութիւնը որոշել է Ռու-սաստանի դանաղան քաղաքներում բանալ սե ր-մի պահեստներ, որոնք պէտք է վաճառվեն աղբիւր և ընտիր արմերը Պաւստը պէտք է նոյնպէս գնի գիւղատնտեսներից նրանց արդիւ-նաբերած սերմացու հասիկները և արմա-նները:

Նոյնիմիս մեզ գրում են. «Յուլիսի 26-ին թատրոնատէրները խուճրդ, օրիորդաց դպրոցի դահլիճում, յօգուտ Բարեգործական ընկերու-թեան տուեց մի ներկայացում. խաղացին «Օ-րիորդ Բերդեանց» կոմիդիան և «Պատաներին Լրատա» վոլյուլը. մուտք եղաւ 140 ռ., ծախս 42 ռ.: Ղուտ արդիւնք մնաց 98 ռ.: Ներկայացումը խաղի և մուտքի կողմից կարելի է ասել համարել. ղերակատարները բարեխղճութեամբ կատարե-ցին իրանց դերերը, բացի մի երկուսից, որ անհամապատասխան և ուժերից վեր դերեր էին վերցրել: Ուշադրութեան արժանի է վարչու-թեան անդամների անտարբերութիւնը դէպի սիրողները. նրանք իրանց անելիք գործը ան-գամ ցցել էին սիրողների չնքնին: Ոչ պակաս

քաջագործութիւնն ցոյց տուին մեր քաղաքի հարուստ զօկերը. մասնաւոր Ներկայացման նպատակը, ինչ-որ անձնական հաշիւներից զերդ-ված՝ զրանցից և ոչ մէկը չէր բարեհաճել թա-րօն գալ. նոյն իսկ ուղարկված սոմաւկները յետ էին դարձրել՝ պատճառաբանելով թէ հիւ-րեր ունենք...

Մեր յարգելի թղթակից պ. Նորայր Բելլան-դի «Մշակի» № 82-ի մէջ տպագրած Մոսկովի թղթակցութեան մէջ մի քանի տպագրական ըն-թախներ կան, որ հարկաւոր են համարում ուղ-ղել: Երբորդ երես, երկրորդ սինակ՝ «Էսրս Շուէտ», և մասնաւորապէս Մոսկովի... իրաւու-թեամբ գրկեցին և մեծարեցին՝ պիտի լի-նի գրեցիդն: «300-ին չափ հրաւիրեալ չուե-տացիք», պիտի լինի «300-ի չափ»: Երբորդ սինակի մէջ Klaretie գրվածը պիտի լինի Claretie: «Էջ գրեալ թէ ձեր փառքի կրկին ինչ մեծ մարգարիտութիւն ցոյցուց թշուառ հայ ազգին», պիտի լինի՝ գիտեմ:

Հին-ՆԱԽԻՋԵՆԻՍԻ գաւառի Տանակերտ գիւ-ղից մեզ գրում են. «Յուլիսի 21-ին հողին յանձ-նեցին Մոսկովայի կայսերական համալսարանի ուսանող Յովհաննէս Սուլիսեանին. հանդու-ցեալ լաւ աղագայ էր խոստանում: Նրան թա-ղեցին իր հայրենի Հանդամէջ գիւղում. դադարի վրա զրկվեցին մի քանի պատկեր, դամբանական ասացին երկու անձինք: Խորին վիշտ յայտնելով վաղա՛մեռ ուսանողի համար, չենք կարող ծած-կել մի ուրիշ ցաւ—հանգուցեալ ընկերներից մի երկուսը չէին բարեհաճել իրանց ընկերին վերջին հրաժեշտ տալու. ներքի է միթէ»:

Հին-ՆԱԽԻՋԵՆԻՍԻ մեզ գրում են. «Յուլիսի 27-ին, կիրակի օր, ս. Գեորգ եկեղեցում կա-տարվեց մի քանիստի ձեռնադրութիւն, Նախի-ջեանի գաւառի Կոնստանտին Գեորգի համար: Ձեռնա-դրուին էր նոյն գիւղացի Երանտ վարդապետացի, վերակալելով Ներսէս Նա Ներսիսեան գալու-ցի 1888 թվի աւարտողներից է. հետեալ տա-րին ստացել է գիւղական դպրոցի ուսուցչի պէնդ և անընդհատ պաշտօն է վարել դանաղան ծխական դպրոցներում մինչև ներկայ թակա-նը: Վերջին տարին նա ուսուցիչ էր Մադրասա-մի եկեղեցական դպրոցում: Ձեռնադրուին էր երեքօրի վաճառի վաճառայր Մեսրոպ արքեպիսկո-պոս Սմբատեանց: Ձեռնադրութեան ծիսակա-տարութիւնից յետոյ, արքապետ դարձաւ հան-դիսականներին, համառօտակի բացատրեց ձեռ-նադրութեան խորհրդի միտքը, քանակական պաշտօնի վեճութիւնը և իր ուրախութիւնը յայտնեց, որ իր ձեռքով կարգվում է մի հօտի վրա ուսում առած հովիւ, զարգացած քահա-նայ: Երանտ տուեց այն ժողովրդին, որ այդօրի-նակ ղեղըրում վարվում է գիւղացիօրէն և ցա-ւելով յայտնեց, որ շատ անգամ (իսկ մենք կասենք, որ համարեա միշտ) խնամական յա-րաբերութիւններից դուրս գալով, առաջարկվում և ձեռնադրվում են անարժան քահանայացուներ:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՆՕՎԱՍ ԴԵՂ ԿԱՍԻՆԻՍ

Անարխիստների ձեռքով նորերն սպանված սպանական միջնորդ-նախագահ Կանովա ԴեՂ Կաստիլիո Սպանիայի նշանաւոր պետական անձերից մէկն էր: Նա ծնվել է Մալաղայում 1828 թ.ին: Աւարտելով Մադրիդի համալսարա-նում փիլիսոփայական և իրաւագիտական գիտու-թիւնների դասընթացը, նա սկսեց դրօշը մա-մուլի մէջ: Իր պատմական և բնութագրական աշխատութիւնների համար, նա ընտրվեց ակա-դէմիայի անդամ: 1851 թ.ին նա յանձն առաւ պահպանողական «Patria» լրագրի խմբագրու-թիւնը, իսկ 1854 թ.ին ընտրվեց կորաէս-ների անդամ: Գրանից յետոյ մի քանի անգամ նա կատարեց միջնորդի պաշտօն, և 1868 թ.ին հանդէս դուրս եկաւ իբրեւ չափաւոր սահմանա-դրական միապետութեան ջանքով ու կողմնա-կից և սկսեց ղեկավարել այն կուսակցութիւնը, որը իրան նպատակ էր դրել իշխանաւոր թագու-հու հրաժարումից յետոյ, սպանական գահը բարձրացնել Բուրբոնների կրտսեր ճիւղը: Երբ այդ նպատակը իրագործվեց և Ալֆոնս XII թա-

գաւոր դարձաւ 1874 թ. դեկտեմբերին, Կանո-վա նշանակվեց միջնորդ-նախագահ: Սկզբում նա իր ղեմ յարուցեց կղերական կուսակցութիւ-նը, որովհետեւ խոստացել էր պապին վերանո-ւթել 1851 թ. կոնկորդատը, բայց չը կարողա-ցաւ կատարել խոստումը և ստիպվեց մայնել նոր սահմանադրութեան մէջ դաւանութիւնների ազատութիւնը սահմանափակող յօդուածներ, սա-կայն 1875 թ. նրան աջակցեց անցկացնել կոր-աէսներում մի նոր սահմանադրութիւն, որ որոշ չափով զոհացրեց կղերականներին պահանջները:

Իբրեւ կղերական և պահպանողական կուսակ-ցութեան կողմնակից, նա հակառակ էր ամեն-մի վերանորոգչական գործունէութեան և այդ պատճառով հրաժարվեց իրագործել Մարտինոս Կամպոսին տուած իր խոստումը: Կանո կղերում ընթացիկներ մտնելու մասին: Ուստի նա ստիպ-վեց թողնել իր պաշտօնը 1879 թ. և նրա տեղը գրեցեց Կամպոսը, որը, սակայն չուտով ստիպ-վեց ղեկել միջնորդական աթոռը դարձեալ Կա-նովային, որ կորաէսներում մեծամասնութիւն ունէր: Որովհետեւ ազատամիտ կուսակցութեան ղեկավարութիւնը ստանալում էր երկրի մէջ և Ալֆոնս թագաւորը չէր ուզում բուրժուական հե-ռացնել իրանից ազատամիտներին, ուստի Կա-նովա ստիպվեց 1881 թ.ին նորից հրաժարվել: Այդ օրից նա յայտնի կերպով սկսեց ղեկավա-րել պահպանողական կուսակցութիւնը, որ յեն-վում է միայն արիստոկրատիայի և հոգեւորակա-նութեան վրա, և երբ 1884 թ. ազատամիտ կու-սակցութիւնը պարտութիւն կրեց, Կանովա նո-րից ստացաւ միջնորդ-նախագահի պաշտօնը:

Ալֆոնս թագաւորի մահից յետոյ, երբ հան-րապետականների և կարլիստների շարժումները վտանգ էին սպառնում միապետութեան, Կանո-վա ինքն նպատակեց Սպանիայի ազատամիտ կարլիստի կազմելուն, որպէս զի բոլոր միապե-տական կուսակցութիւնները միաբանվեին 1886-ին նա ընտրվեց կորաէսների նախագահ, և երբ 1888-ին վեճական կերպով ընդդիմադրեց ընդհանուր ընտրողական իրաւունքին և առհա-սարակ ընթացիկներ իրագործման, մեծ ղեկավար-թիւն յարուցեց իր ղեմ, որը գնալով այնքան աճեց, որ հասցրեց ողբերգական վախճանի, ինչպէս է նրա սպանութիւնը անարխիստնե-րի ձեռքով:

ՅՈՒՆԱՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԲՈՂՈՒՐԸ

Յունաց կառավարութիւնը յանձնեց մեծ պե-տութիւններին մի չըջարեւական յիշատակալի, որի մէջ ստեղծ է, թէ յունաց կառավարութիւ-նը հնորակալութեամբ ընդունեց մեծ պետու-թիւնների միջնորդութիւնը և յանձնեց նրանց իր շահերի պաշտպանութիւնը, բայց յանձնելով նրանց հաշտութեան դաշնագիր կնքել, նա զըտ-նում է, որ մեծ պետութիւնները դուրս են ե-կել իրանց տրված լիազօրութիւնների սահմա-նից: «Յունաստանը ոչինչ չէ առարկում այն ծանր պայմանների դէմ, որ որոշել են պետու-թիւնները, թէ և այդ պայմանները այնքան ծանր են, որ թէ կը սպառեն Յունաստանի կենսա-կան ոյժերը և թէ կը զրկեն նրան պաշտպա-նութեան օր և է միջոցից, չէ առարկում այն պատճառով, որ նա լիազօրութիւն է տուել այդ մասին մեծ պետութիւններին: Բայց Գերմանիա-յի առաջարկութիւնը՝ ֆինանսական կոմիտիի մասին՝ մինչև այն աստիճան խախտում է Յու-նաստանի տուած լիազօրութեան սահմանները, որ յունաց կառավարութիւնը պարտ է համա-րում բողոքել և յայտնել, որ յոյն աղղը միայն ոյժի առաջ կը զիջանին: Յունաստանը պահան-ջում է որ իրան իրաւունք տրվի համաձայնու-թեան մէջ մանկ իր պարտաւեցիների հետ ան-միջպէս և առանց կողմնակի միջամտութեան: Երբ Բելլիսի կոնգրեսում որոշվեց որ Թիւրքիան պատերազմական տուգանք տայ Ռուսաստանին, վերջինիս թոյլ չը տրվեց պահել նուաճած եր-կիրները: Մինչև առաջինի վճարումը և Թիւր-քիայի վրա էլ ոչ մի օտար ֆինանսական հսկողութիւն չը հաստատվեց, չը նայելով, որ Թիւրքիան ուրիշ շատ պարտքեր ունէր:

Երկի հաշտութեան հաստատելը դեռ շատ հե-ռու է և ինքզ թեւաւորան դեռ երկու պէտք է տանջվի թիւրքաց բռնակալութեան տակ:

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Ուր միայ, յուլիսի 20-ին Ռուս միտիստների գործունէութեան մա-սին տես թէ ինչ են պատմում ասորիները:— Հայր Վիկտոր Անդրեյի, իբրեւ պատասխան իր ուղարկած տեղեկագրերին, տեղեկութիւն է ըս-տացել Պետերբուրգից, թէ Կայսրը բարեհաճ ուշադրութիւն է նուիրել բոլոր ղեկուցումնե-րին և թէ ի մօտայ ուսումնասիրութիւն ընդու-նող ժողովուրդը Ռուսիոյ սահմաններում արժա-նանալու է Կայսերական բարձր շնորհուններին և վաղեմելու է այն ամեն առանձնաշնորհութեան-ները, որոնցով նա կարող է, իբրեւ մարդ և քրիստոնեայ, ապրել իր բնիկ հայրենիքում: Նը-չանակվել է արդէն հիւպատոս այս նոր թեմի հօտի իրաւունքները պաշտպանելու, յատկապը-ված է նաև մի որոշ գումար՝ եկեղեցիների չի-նութեան և նորոգութեան համար, ինչպէս նաև հարկ եղած տեղեկում ուսումնասիրաներ հաս-տատելու ասորի մանուկների համար, ո-րոնք ուսանելու են ուսեւերէն, ասորերէն և պարսկերէն լեզուները և գիտութիւններ ձեռն-հաս ուսուցիչների օժանդակութեամբ:

Հայերի կրթական գործը շատ ողորմելի է: Միայն քաղաքում մի երկուս համեստ, աղքա-տիկ ուսումնարան կար, այն էլ փակվեց մի ա-միս առաջ՝ տարեկան սովորական արձակուրդի առիթով, և ո՞վ գիտէ թէ վերադառնալու բացվելու է մի օր, որովհետեւ հոգաբարձութիւնը յայտնեց իր մատուցած հաշւետւութեան մէջ, թէ հաղու կարողացել է 100 մանկի մի փոքրիկ գումար ձեռք բերել անցեալ վեցամսեայ չըջանի միջո-ցում, որը սակայն ամբողջովին գործ է անվել ուսումնարանի ընթացիկ ծախսերը հայթայթե-լու, և թէ գործը չարունակելու համար դրամի մեծ պէտք է զգացվում: Այդ պահանջը ուսկան կարելի չէ տեղական աղբիւրներից գոյացնել, քանի որ աղբիւրներ չը կան բոլորովին: Միւսմ է միայն մի յոյս, այն է նուիրատւութիւններ ստանալ ուրիշ տեղերից յօգուտ Ռուսիոյ հայոց ուսումնարանի: Այդ նպատակով հոգաբարձու-թիւնը ուղարկել է մի քանի տեղեր, ինչպէս թէ՛ Նրան, Բագու և Բոսուով, 300 նուիրատու մի-մի մանկի մանց, որոնք եթէ ընդունուլթիւն գտնեն ժողովրդի կողմից, կարող են ուսումնա-րանի շարունակութիւնը ապահովել, սպա թէ ոչ՝ երեխաները դարձեալ մնալու են փողոցնե-րում: Այդ անաշուղ հանգամանքներից ստիպ-ված, դպրոցի վարժուհին, տիկին Թագուհի Տէր-Ստեփանեան, արդէն մեկնեց իր ամուսնու հետ դէպի արաւստան, մինչդեռ պատեղ աղ-գային մանուկների դատարարակութեան համար այդպիսի ձեռնհաս ուսուցիչներ պէտք լինու-ղգալի է: Մի ցաւալի կէտ էլ կայ—այն, որ ազգային գործիչները օրէցօր հեռանում են այս անձուկ և վշտեց ապարեղից, որպէս հեռա-ցաւ պ. Արքայ Տէր-Նսայանցի, որի երազները այնքան մեծ է Ռուսիոյ հայ ժողովրդի վրա, նա, իբրեւ կարող մարդ, երկար տարիներ մեծամեծ ծառայութիւններ է մատուցել ժողովրդին և նրա անունը անմոռանալի կը մնայ Ռուսիոյ վերջին տարիների պատմութեան անգիր էջե-րում: Առեւտրական գործերի հասանքը քնեց տարաւ նրան մինչև Կովկասի հիմաուրց մայրա-քաղաքը, ուր յուսալի է, որ նա կը յիշէ թըշ-ւատ Ռուսին, իր տառնամայն պանդխտալայրը, և կաշկատի ձեռնհաս և բարեկրտ հայերի ու-շադրութիւնը հրաւիրել այս կրեւոր խաղան մնացած հայաբնակ գաւառի վրա:

Արքայ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՆԻՐ

—Փոքրիկ և անպատրաստ Յունաստանի վրա Թիւրքիայի տարած յաղթութիւնը բացի այն, որ գոռողացրել է թիւրքերին, այլ և սխալ համոզ-մունք է ներշնչել եւրոպական ամուլի մի նը-չանաւոր մասին, թէ թիւրքաց զօրքը սնչւով պակաս չէ եւրոպական զօրքերից: «Македония» լրագիրը վճռական կերպով հերքում է այդ կար-ծիքը: «Մենք, ասում է լրագիրը, հետեւում ենք գործերի ընթացքին Թիւրքիայում և մենք կա-տարեալ հիմք ունենք յայտնելու, որ թիւրքաց զօրքերին չապշված բոլոր գովեստները լոկ չլացում են: Թիւրքիան նման է այն հիւսնող մարդին, որ իր կեանքի վերջին բաղնիքում բարձ-

բացնում է զուգար, բայց է անում աչքերը, որ-
պես թէ իր նախնին ուղիղը վերադարձել են,
բայց դա միայն մեծնողի վերջին չնշանակում
է: Եւ որտեղից պէտք է թիւրքիսն ուղի ստա-
նար, երբ ամենքին լաւ յայտնի է այն վիճակը,
որի մէջ նա գտնուում էր պատերազմից առաջ:
Մի քանի ամիս առաջ մենք ընդունուեալ
Թիւրքիային անօգնական, անզօր, նիւթապէս
կործանւած. երբ Յունաստանը պատերազմ հրա-
տարակեց, Թիւրքիան առանց դրամի էր, առանց
ուսումնական, առանց միջոցների: Բայց որտե-
ղից նա փող վերցրեց. Մակեդոնիան և Օղբինի
վիլայէթը նրան հարկաւոր միջոցները հայթայթե-
ցին. այդ երկու երկրներին ընակելիները տուին
իրանց ամբողջ դրամը, դրամը, և պատերազմը
աջող անցաւ Թիւրքիայի համար:»

— Գերմանիայի և Անգլիայի յարաբերութիւն-
ները հետզհետեւ աւելի են լարուում: Վիլհելմ
կայսրը, որ մտադիր էր Անգլիա դնել, այժմ
թողել է այդ դիտաւորութիւնը հետեւեալ պատ-
ճառով: Վիկտորիա թագուհու յօրէկանի տօնա-
խմբութեան ժամանակ վիլհելմ կայսրի ներ-
կայացուցին էր իր եղբայր Ալբրեխտ իշխանը.
սա լծնդծում օտարոտի ընդունելութիւն դտաւ:
Երբ յօրէկանի օրը իշխանը հանդիսաւոր ընթացքի
հետ անցնում էր փողոցով, հասարակութիւնը դա-
նաղան անվայել բացաղանջութիւններ ուղղեց նրա
հասցէին, ամբողջ, ի միջի այլոց, զօնում էր,
«չէք ցանկանալ հեռագիր ուղարկել» (անկողնի
վիլհելմ կայսրի Տրանսլատիոն նախագահին ու-
ղարկած հեռագրի մասին): Այդ թշնամական
ցոյցին իբրեւ պատասխան իշխանը միայն մատով
ցոյց տուեց իր սպաւազդի վրա եղած կաշսե-
րական զինանշանը: Այդ դէպքից յետոյ, ա-
տու ին Յելլինի մի քանի լրագրիներ, զըմ-
վար թէ գերմանական կայսրը կամենայ դնալ
մի երկրին, որ այդպէս զարմանալի կերպով են
ըմբռնում հիւստիստիկան պարբեր:»

— Սուլթանը, իբրեւ վեհապետ, դանադան ըն-
ժաններ է չհորհել բողոքական իշխանին, այն է
թանգազին մատանի, ժամացոյց, չլիւսյ և այլն:
Սուլթանը տուել է իսկիւնաբի չքանչան աղա-
մանդներով, իսկ զիւլումաթական գործակալ
Մարկովին՝ Օսմանիէ չքանչանի առաջին աստի-
ճանը: Սուլթանի այդ վեհապետական շնորհների
մասին թիւրք լրագրիները ընդարձակ յօդուած-
ներ հրատարակեցին, սակայն, երբ Ֆերդինանդ իշխանը
իր կողմից յանձնեց սուլթանին բողոքական
«Ալեքսանդր» չքանչանը, Կ. Պոլսի լրագրիներին
ստատիկ կերպով արգելիւց այդ մասին որ և է
բան յիշել, սրտէս զի մուսուլմանները միշտ այն
կարծիքի մէջ մնան, թէ բողոքական իշխանը
լոկ սուլթանին ստորադրեալ մի պաշտօնեայ է և
ոչ թէ անկախ իշխան, որ կարող է սուլթանին
չքանչան տալ:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Ֆրանսիացիները սկսել են վառ մամուլի աղ-
ղեցութեան դէմ կուռել... աղօթքներով և պա-
տարարներով: Միապետական և կղերական լը-
րագրիներին մէջ վերջերս շարունակ սկսել են
սպառնալիկ այս տեսակ յայտարարութիւններ.
«Հինգաթիւր, Digoan ծխական եկեղեցում պա-
տարապ կը մատուցանուի, առաւօտեան ժամը
9-ին, լաւ մամուլի աջակցութեան համար: Մի
ուրիշ լրագրում տպւած է. «Հիմնովի է աղօթք-
ների զանազանութիւն լաւ մամուլի տարածման
և վառ լրագրիներին գործած չարքիւր խախտե-
լու համար... Գրաւ համար յանձնարարուած է
մամուլայ ընթացքում 231 պատարապ անել տալ
և 49 թախար կատարել:» Եթէ աղօթքով և պա-
տարապ մատուցանելով հնար լինէր անդիտան մա-
մուլը ունչացնել, մենք պատարապ ենք տարե-
կան 1001 պատարապ մատուցանել (պարապ բա-
հանաներ հօ չառ ունենք), միայն թէ կարելի
լինէր չայց անարդարականացած և փչացած փա-
ղցոյցին մամուլը մի փոքր ուղղել...

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐԻՑ, 4 օգոստոսի: Տուրինի կոմսի և Օր-
լէանի պրինցի միանադարձութիւնը տեղի ունե-
ցաւ սրբիւրով, առաւօտեան 5 ժամին և տեւեց 26
րօպէ: Օրլէանի պրինցը երկու րօպէ վերջ ստա-
ցաւ: Տուրինի կոմսը վերջ սացաւ աջ ձեռքին:
Օրլէանի պրինցին փառաբանեցին Շարտրի դուքսի
ստեւը, և զրեցին անկողնի մէջ:

ՎԵՐԻՄԱՐԱ (Սպանիա), 4 օգոստոսի: Ձինուրա-
կան դատարանը վճիռ կայացրեց Անթիօլիօյի
մասին: Վճիռը յայտնի կը լինի այն ժամանակ,
երբ կը հաստատուի զինուորական բարձր ա-
տենանի կողմից:

ՊԱՐԻՑ, 4 օգոստոսի: Օրլէանի պրինցի առաջ-
ջութիւնը միանգամայն բաւարար է:

Կ. ՊՈԼԻՍ, 4 օգոստոսի: Երէկ, Թօփիսանէյի
նիստից յետոյ, տեղի ունեցաւ դեսպանների
երկրորդ ժողովը: 6-րդ յօդուածը դեռ չէ ստա-
րագրուած, բայց համաձայնութեան յոյս կայ:
Յաջորդ նիստը՝ երեքշաբթի օր:

ԲՕՄԲԵՑ, 4 օգոստոսի: Հնդկական երկաթու-
ղիները երկրի բոլոր մասերից դօրք են փոխա-
դրում դէպի հիւսիս:

ՕԴԵՍՍԱ, 5 օգոստոսի: Օդեսայի քաղաքային
դուսման միաձայն որոշեց. — Ֆրանսիական հան-
րապետութեան նախագահ Ֆօրբի Ռուսաստան ե-
կած օրը՝ ուղարկել նրան ողջունի հեռագիր:

ԼՕՆԻՕՆ, 5 օգոստոսի: «Times» լրագրին հե-
ռագրում են Կ. Պոլսից. «Շարաթի օր, Թօփիսա-
նէում տեղի ունեցած ժողովում, չորս դեսպան-
ները յայտնեցին, որ իրանը ընդունում են գեր-
մանական կառավարութեան ծրագրերը, Թեոս-
կիայից թուրքերի փոքր առ փոքր հեռանալու
մասին: Իսկ Երբրի յայտնեց, որ Սօլթիւրին այդ
մասին կը ներկայացնի իր առարկութիւնները:»

«Կիօսին լրագրին» հեռագրում են Կ. Պոլսից,
որ խաղաղութեան ընտանցութիւնների դործում
նոր արգելքներ ծագելին, որովհետեւ Անգլիան
հրաժարուած է համաձայնութիւն տալ Թիւրքիա-
յի պահանջին՝ դրանց և Լաթիսիայի և Վլօրից
հարաւ գտնվող նահանգը՝ մինչեւ պատերազմա-
կան սուղանքի վճարելը: Անգլիական դեսպանը
առաջ համաձայնութիւն տուեց, իսկ այժմ անգ-
լիական կառավարութիւնը դժուարանում է հա-
մաձայնվել այդ բանի հետ:

ԲՕՄԲԵՑ, 5 օգոստոսի: Կերատ կայարանից
ստացված հեռագիրը հարորդում է, որ չարաթի
երեկոյեան Շարաթիւրի ուղղութեամբ, Պեչա-
վերում, լսվում էին կատաղի հրացանածու-
թեան ձայներ: Պեչավերում արիւրած է մեծ յուղ-
մանը: Կերատից Վլօրիք են տեղափոխված կա-
նաչը և երեխաներ:

ՄԱԳԻՒԻ, 5 օգոստոսի: Ձինուրային խոր-
հուրը դուստրովով վերադարձում, Անթիօլիօ-
յին մահվան դատապարտեց:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՕՐՍԱ

Օգոստոսի 5-ին

Լծնգոնի վրա 10 ֆունտ արծէ.	93	ր. 75	կ.
Լեբլինի վրա 100 մարկ —	45	» 85	»
Պարիզի վրա 100 ֆրանկ —	37	» 17 1/2	»
Ռուսի —	արծէ	»	»
Մաքսային կուպոններ —	149	»	»
Բօրսային դիվիդենդ —	4 1/2	» 6 1/2 0/0	»
4 0/0 պետական բէնտա	99	»	»
Ներքին 5 0/0 առաջին փոխառութիւն —	287	»	»
—	246	»	»
5 0/0 գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի 205 1/2 —	»	»	»
5 0/0 պետական երկաթուղ. բէնտա —	»	»	»
4 0/0 ներքին փոխառութեան	98 3/4	»	»
4 1/2 0/0 գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի 100 5/8 —	»	»	»
Աղն. կալ. Պետ. բանկի խաղաղութիւն —	»	»	»
4 1/2 0/0 վկայակ. զին. հող. բանկի 101 3/8 —	»	»	»
Փոխ. կրօն. բնկեր. մեռալ. —	»	»	»
Պետերբուրգի քաղաքային կրօն. —	»	»	»
Ընկերութեան օրիգինալներ —	101 1/4	»	»
Մոսկույի քաղաք. օրիգինալներ —	101 1/2	»	»
Օղէտայի —	100	»	»
Թիֆլիսի —	99 1/2	»	»
Թիֆլիսի կալ. բանկի 6 0/0 —	102	»	»
5 0/0 —	99 7/8	»	»
Գուժալիսի —	102	»	»
5 0/0 —	99 3/4	»	»

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԼՕՆԻՕՆ, 5 օգոստոսի: Ձեր թղթակցութիւնը
արտասահմանի հայոց մամուլի մասին անկարող
ենք տղադրել մեզանից անկախ պատճառներով:
ԲԱԳՈՒ, Կ. ձգնաւորական: Գաղթականների
օգտին ուղղված դուստրը ստացել ենք. դրա
ցուցակը հերթով կը տպագրվի «Մշակ» է-
ջերում:

ՍՈԼԻՍԻՏԱՐ (Բողոքարար). Ակարի. Ձեզ ու-
ղարկվեց «Մշակ» օգոստոսի 1-ից: Թղթակցու-
թիւնները կը տպագրվեն:

ԲԱԳՈՒ, Ֆ. Մ. Յայտարարութեան տպագրու-
թիւնը արժէ 2 րուրի:

Խաղաղութիւն՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐԴՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ ա Ր Ղ մ ա ն վ ու մ է

Գ Ր Է Ն Ի

«СЛѢПОЙ БРАТЪ»

Վերբը

(№ 91)

1—2

ԲԱԳՈՒԻ ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու
համար հարկաւոր է մի ՀՄՈՒՑ ՉԱՅՏԱ-
ԴԵՑ, Եկեղեցանի նոր ձայնագրած ձեռնարկի
համաձայն քառաձայն երգեցիկ խումբ պատ-
րաստելու: Յանկացողները թող դիմեն իրանց
պայմաններով: ԲԱԳՈՒ, զրասնեակ Համբարձում
Միլիքեանի: (№ 90) 1—3

ՄԻ յԵՆՂԱՐ ԶԱՅՏԱԳՐԱԳԵՏ

ուսուցիչ պաշտօն է որոնում կարող է
քառաձայն կանօնաւոր երգեցիկ խումբ
կազմել: Պայմանները մասին դիմել ԴԻՓ-
ԼԻՏԵ, Մ. Ս. Մարգարեւ.
(№ 91) 1—4

«ԱՄԱՌՆԱՅԻՆ ՆԵՄԱԿՆԵՐԻ»

ցանկացողները ուղղակի կարող են դիմել Մ.
Բարխուդարեանին հետեւեալ հասցեով. Москва,
Мяс. ул. въ типографію Бархударяна, д. Ер-
макова.

Խաղաղութիւն օրինակը արժէ 1 ր. 50 կօպէկ:
Ս. Շահադիղեանց
(№ 90) 2—5

ԲՈՂԱԿԱՐԵՏ Ե. Ի. ՓՐԵՆՅՈՒՄ

Մասնագէտ կոնորային, քիմիայի և ակաւ-
ջային հիւսնգութիւնների ամուր ընդու-
նում է միայն երկուշաբթի, չորեքշաբթի և
ուրբաթ օրերը ժամը 6—7 երեկոյեան
վերախնայեալ փողոց տան № 4 Գումա-
յի հանդէպ:
(№ 76) 10—12

ՆԱԽԻՋԵԻԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Հօգաբարձութեան վճար համաձայն, առաջիկայ օգոստոսից պէտք է լինի ընդունելութիւն
ծրիւկարձ և թույլաւոր դիւրօթիկ աշակերտներին: Չորսվարձերի թիւը պէտք է լինի 15, որ-
անց թուած պէտք է երեք լինեն վիճակի քաղաքներից՝ սրբազան առաջնորդի ընտրութեամբ և
երկուքը վիճակի չըջակայ հայ գիւղերից, իսկ տաս հօգի պէտք է ընդունվեն՝ համաձայն դրոցի
բարեբար Գեաղօթի կտակին՝ Նախիջևան քաղաքի չքաւոր դատակարգի հայ ընտանիքներից: Թու-
յակաւորների համար տարեկան վարձ նշանակված է 300 րուրի՝ կէսն օգոստոսին և միւս կէսն-
յունվարին: Գիւղերի թիւները համար պէտք է լինեն երկու առանձին դատարարները՝ հատկապա-
րական կրթութեամբ: Յանկացողները վաղօրօք պէտք է լինելամատուց լինեն յանուն հօգաբար-
ձութեան՝ թույլաւորների թիւի սահմանափակ լինելուն պատճառով (ընդամենը 25). պէտք է
ներկայացաւին ծննդեան և պատուաստի վկայականները:

(№ 83) (յուլ. 17, 19, 22, օգ. 2, 5, 7)

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանօնաւոր և ուղղակի նաւադնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ, սկսած յունվարի 25/6-է չորեքշաբթից:

Եւ հակառակը՝ Բաթիօնից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պոլսու Մեկնում է Բաթի-
մից՝ չորեքշաբթի, 20 ին օգոստոսի (1 սեպտեմբ.) ՍԻՐԿԱՍԻ չորեքշաբթի, նաւապետ ԳԱՐԻԻԿ և
այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ձախց
յետոյ: Բաթիօնից Պարիզ ուղղակի հօգորդակցութեան տամաները տրվում են սովորականից
Պալաւս գինը րոպ: Աղանդների և ձանաղարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների
ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին:

ԲԱՌՈՒՄՈՒՄ—պ. վերաւոր զ'Արմօնի, Նաբէլէմալայ ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարեկենդա-
նեանին, Սիօնի փող. նախնին Արմօնու քաղաքապետ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիւրաբանին, Կօլիբեա-
նիկայա հրապարակ՝ ՆՈՎՈՐՈՍՍԻՅԱ—պ. Մեկնիօր Հեռչնիօրդերին: (№ 76) 11—20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՆԱՄԵԱՆ

Հեղինակ Չեռնարկի առեւտրական և գործարանական հա չ ու ա տ ա հ ու թ է ա ն
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց, 4 ամսայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, և-
րաշխաւորելով և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՏՐԱՍՏՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆԵՐ
Ա. Կրկնակի խաղական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ձեւերի, հան-
դերձ նաւթային արդիւնաբերական և կերտնիի գործարանական հաշուառութեան:

Բ) Առեւտրական թուաբանութիւն.
Գ) Առեւտրական նամակադրութիւն.
Դ) Գեղարդութիւն և ամենամատ ձեւերի ուղղութիւն:

Պարագմօնները սկսվելու են սեպտեմբերի 15-ից ձախց յետոյ և պարբերաբար շա-
րունակվելու են իւրաքանչիւր 2ՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առան-
ձին գործնական պարագմօններ:

Յանկացողները թող դիմեն դրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչեւ 5 ժամ երեկոյեան,
ՍՈԼՈՒԱԿ, Սաքովայա փողոց, տուն Մարբարօվի, № 27:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍԻՄ, խիզղէկերը դրա-
վաճառանցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի դրաւաճառանոցներում:
ԴԻՆԵ Է 3 ր. 50 կօպէկ:

Օտարաբաղաբացիները զիբբը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց
օգոստոյի ծախս վճարելու: (№ 76) 10—15